ուղղողը կամ սրբագրողը այս շրջանում Եսային է (Ցաւել. Բ. 69)։ Գրչութեան դպրոցներում այդ մի անհրաժեշտ պաշտօն էր ձեռագիրները սխալներից ազատ պահելու համար։

Բայց Եսային ինքն էլ իւր ձեռքով ձեռագիրներ է պատրաստել. Ձեռ. Էջմ. № 659/437, 68ա–386բ գրուած է Նչեցու ձեռքով, տարաբաղդաբար սկզբից և վերջից պակաս, միայն 1–67բ յետոյ է աւելացրած ձեռագրի վերայ։ Թուականը որոշել կարող չենք, բայց Ներսէս Մշեցու մահուանից տարիներ առաջ է գրուած, գուցէ և մինչ Գլաձորում հաստատուելը. գրիչը փոքրիկ յիշատակարաններ ունի մի քանի տեղ, ուր խնդրում է յիշել իւր վարդապետին. օր. 144ա «Զվպտն. իմ զՆերսէս եւ զամենամեղ գրողս աշակերտ Նորին Եսաի, յիշել աղաչեմ ի տր.». «Աղաչեմ յիշել զպետս իմ վարժից եւ իմոց համասեռից Ներսէս, ընդ նմին եւ զամենամեղս Եսաի գրիչ»։ Այս վերջին նկատողութիւնից պարզ է, որ դեռ եւս վարդապետական անկախ գիրք չունի նա։ Աշակերտակիցներից մէկը օգնել է օրինակը եւ «քարտ»ը շնորհելով (107ա). «Զհամշիրակ եղբ. իմ Սփ. որ զօրինակս քարտիս հանդերձ շնորհեց., յիշեսջիք ընդ նմին եւ զամենամեղ գրիչս Եսաի, աղաչեմ»։ Մի ուրիշ ընկեր օգնել է արտագրութեան մէջ 110–126բ և ուրիշ տեղեր փոքր չափով, չյիշելով իւր անունը. «Ով պատուական եղբայր Եսի., դու արժանի ես, թէ Ա. տեսր այս ցեղ քեզ օգնութի. է արրել., ապա դու գիտես զտկարութիս. եւ զհարկս որ ի վր. կա, անմեղադիր լեր եւ յաղօթից մի մոռանար, թէ այլ կարեմ օգնել. յօժար եմ»։ Այս մէջբերումներով կամեցանք ոչ միայն գրչութեան մօտաւոր ժամանակը որոշել, այլ եւ ժամանակի դպրոցական բարքերի մասին գաղափար տալ։ Ձեռագիրը գրուած է դպրոցական նպատակների համար (Ցաւել. Բ. 70, Ձեռ. № 659/437)։

Ներսեսի մահուանից քիչ առաջ և իբրեւ դպրոցի ղեկավար իւր ուսուցչապետի աթոռը դեռ եւս չժառանգած ունինք Նչեցու ձեռքով գրուած մի ուրիշ ձեռագիր, «հրամանաւ երիցս երանեալ առնն ԱծՅ տր. Գրիգորի արքեպիսկոպոսի սարարադեան գաւառի»... «ի վայելումն արիւնառու մերձաւորաց եւ ժառանգորդաց իւրոց տր. Վարդանա եւ Դիթ. եւ Գրիգոր վպտի. . . .», «եւ միւս այլ վպտի. Վահրամա, որ ի սոցանէ սնեալ եւ կրթեալ ի մամուլս գրոց, եւ ի սոյն ամի եղեւ կոչումն սորայ յաստիճան վպտութե.»։ Այստեղ յիշուած Գրիգոր արքեպիսկոպոսը և իւր ազգակիցները բոլորն էլ այս եւ այն կերպով նշանաւոր են հանդիսացել իրենց շրջանում. առաջինը Բզնիի և Վիրսպի արքեպիսկոպոսն էր, Զագավանից ժողովի նախաթոռ եպիսկոպոսը (*), Վարդան եւ Գրիգոր հարազատ եղբայրներ են, վերջինը Բզնեցի մականունով յայտնի, ձեռագիրների ստացող և մասնակից Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ, ընդդէմ Անաւարզեցու գումարուած ժողովին. իսկ Վահրամը հեղինակ մի ճառի, որի վերջաւորութիւնը ուղերձ է իւր վարդապետին, աստիճան ստանալու առթիւ (Ձեռ. Էջմ. № 636/734)(**)։ Գրիչ Եսային իւր հետ յիշել է խնդրում և «զսիրելի եղբայրս Ստեփանոս սպասաւոր բանի», որի մատերմութիւնը տեսանք վերև եւս «համշիրակ եղբ. իմ Սփ.» կոչելով Նորան (Ցաւել. 71, Ձեռ. Էջմ. № 1432/1422)։

Ներսէս մեռնում է «ի բարւոք ծերութեան» Գլաձորի վանքում, ինչպէս տեսանք Նորա Վկայաբանու-



Պատկեր 200.

թեան մէջ. մի անյայտ ժամանակագիր հաստատում է ոչ միայն մահուան տարեթիւը, այլ և յայտնում ամսաթիւը. «Հանգեաւ ի Քս. Ներսէս վդպն. ի վանս Գլաձորոյ, թվ. հայոց ՉԼԳ ի փետրվարի գ., ի փառս»(***)։

Նչեցին յաջորդեց իւր ուսուցչին ոչ իբրեւ համբակ. Գլաձորի հետ կապուած առաջին ձեռագրի մէջ արդէն յիշատակութիւն ունինք նրա մասին իբրեւ վարդապետի. ուսուցչի կենդանութեան ժամանակ նա օգնում էր ձեռագիրների սրբագրութեան, հաւանօրէն, նաև ուսուցչութեան մէջ(****)։ Ինչպէս Վարդանի կեն-

(*) Շողակաթ, 1913, Վաղարշ.։ Մեր Զագավանից ժողովը յօդուածը, եր. 23, 30 և շար.։

(**) Տաչեան (Ցուց. Վիեննայի Ձեռագրաց, եր. 771) յատկացնում է այդ ճառը Վահրամ բարունի Կիլիկեցուն՝ Լեւոնի ժամանակակից. բայց հեղինակի դիմումները իւր ուսուցչին և նրան ուղղած գովեստները յատուկ են Գլաձորի աշակերտներին (տես Ցաւել. Գ. 13)։

(***) Ձեռ. Էջմ. № 13/84, 282բ։

(****) Մատթէոս գրչի ձեռքով «ի թուիս ՉԻԴ» (= 1274), «ի վանս Առաջաքար» Գրիգոր Բզնեցու իշխանութեան տակ, գրուել է «Փիլոնի այնոցիկ որ լինելութենէ խնդրոց եւ լուծ-